



**Այլ պետություններում գրանցված
կազմակերպություններին վճարված եկամուտների մասին
տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու
վերաբերյալ**

Հարց

ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կողմից ռուսական կազմակերպությանը փոխադրման (ֆրախտի) ծառայության համար վճարված եկամուտների դեպքում անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից Ձև 273 (ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻ, ԱՅԴ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԵՎ ՊԱՀՎԱԾ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ) հաշվետվությունը:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ հարկային գործակալները մինչև յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում նախորդ հարկային տարվա ընթացքում այլ պետություններում գրանցված կազմակերպություններին վճարված եկամուտների,

եկամուտների վճարման ամսաթվի, այդ եկամուտներից հաշվարկված և պահված շահութահարկի վերաբերյալ տեղեկություններ: Նույն մասով սահմանված տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի կողմ հանդիսացող պետություններում գրանցված կազմակերպությունների մասով՝ տեղեկությունների փոխանակման պահանջ սահմանված լինելու դեպքում: Նույն մասում նշված՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի ցանկը հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթով սահմանված տեղեկության ներկայացման պահանջը բխում է մասնավորապես՝ «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրության դրույթներից: Նշված արձանագրության հավելված N1-ով սահմանված պահանջների 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ փոխանակման մասնակից պետությունների իրավասու մարմինները կատարում են փոխանակման մասնակից պետությունների իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկության փոխանակում՝ փոխանակման մի մասնակից պետության իրավաբանական անձի եկամուտները, որոնք հարկվում են փոխանակման մեկ այլ մասնակից պետությունում՝ վճարման աղբյուրի մոտ:

Այլ պետություններում գրանցված կազմակերպություններին վճարված եկամուտների, եկամուտների վճարման ամսաթվի, այդ եկամուտներից հաշվարկված և պահված շահութահարկի վերաբերյալ տեղեկությունների ձևը և դրա լրացման կարգը հաստատվել է ՀՀ ՊԵԿ նախագահի 30.06.2021թ. N639-Ն հրամանով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 30.06.2021թ. N639-Ն հրամանով հաստատված տեղեկություններում արտացոլվում են, մասնավորապես՝ ԱՊՀ մասնակից պետությունների ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձանց վճարված այն եկամուտները, որոնք ՀՀ հարկային օրենսգրքի և ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված դրույթներին համապատասխան ենթակա են հարկման ՀՀ-ում՝ վճարման աղբյուրի մոտ:

Ընդ որում, նշված տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի կողմ հանդիսացող պետություններում

գրանցված կազմակերպությունների մասով՝ տեղեկությունների փոխանակման պահանջ սահմանված լինելու դեպքում: Նույն մասում նշված՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի ցանկը հրապարակում է հարկային մարմինը՝ այն տեղադրելով իր պաշտոնական ինտերնետային կայքում (<https://www.petekamutner.am/ir.aspx?itn=irIntTreatiesApp>):

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

